Հոդված

Գրադարանը կարևոր դեր ունի քաղաքացու զարգացման գործում:
Գրադարանավարը պետք է ամուր կապ պահպանի ընթերցողի հետ,նրանց հաղորդակցությունը շատ կարևոր է: Պետք է գրադարանի աշխատանքը կազմակերպի այնպես, որ ընթերցողի համար գրադարանը դառնա հաճելի վայր:
Յուրաքանչյուր այցելող ընթերցողի համար,գրադարանավարը պետք մշակի ներկայացման ձև,ցուցադրելով նրանց գրադարանում գտնվող յուրաքնչյուր իրի տեղը,հասանելի սարքավորումները,դրանց օգտագործման ժամանակը,հիմնական կանոնները:
Գրադարանավարը պետք է դրսևորի մասնագիտական պատրաստվածություն,եռանդ ու խանդավառություն,որպեսզի
նպաստի գրադարանում դրական,աշխատանքային մթնոլորտի ստեղծմանը,գրավիչ և արդիական:
Գրադարանավարը պետք է դառնա պահպանման և վերանորոգման մասնագետ:
Գրադարանավարը պատասխանատու է գրադարանի ռեսուրսների կառավարման հսկողության,մաքրության,խնամքի,համապատասխանության և օգտակարության,գրքի շրջանառության և վերադարձի համար:
Յուրաքանչյուր ռեսուրս պետք է օգտագործի և դարձնի օգտակար:
Պետք է ունենա մանկավարժական հոգեբանություն:
Պետք է ունենա կառավարման հմտություններ.

1. հետազոտական հմտություններ
2. ճշտապահություն և արդյունավետություն
3. բյուջեի կազման ունակություն
4. ժամկետներին հետևելու կարգապահություն
5. հաշվետվությունների կազմման հմտություններ
6. կարողանա տիրապետել համակարգչային աշխատանքին
7. կազմի գրացուցակներ և խմբավորի ռեսուրսներ
8. զարգացնի գրադարնի պահուստը համայնքի կարիքներին համապատասխան
9. կարողանա կազմել գրադարանի գործունեության քաղաքկանության փաստաթղթեր,գրադարանի զարգացման և մատուցած ծառայությունների գնահատման պլաններ

Գրադարանավարը պետք է լինի համբերատար և ուշադիր,պատրաստ յուրաքանչյուրին ժամանակ հատկացնել:

Պետք է ճիշտ դասակարգում կատարի.

Առկա մասնագիտական գրականության բաժինը պետք է հստակ նշվի:

Գեղարվեստական գրականությունը պետք է տեղադրվի ըստ հեղինակների՝ այբբենական կարգով:

Գրադարանավարը պետք է կազմակերպի միջոցառումներ՝

.հանդիպումներ հեղինակների հետ

.նոր գրականության տեսություններ

.գրական հանդիպումներ,փառատոններ

.բանավեճի ակումբներ

.աշխատանքային պրակտիկայի փորձի փոխանակման հանդիպումներ,ցուցահանդեսներ:

Գրադարանավարը պարտավոր է ապահովել գրադարանում պատճենահանված բոլոր նյութերի հասանալիությունը,չխախտելով հեղինակային իրավունքը,և դրանք օգտագործել օրենքի սահմաններում:

Գրադարանավարը պետք է համագործակցի համայնքի ղեկավարների,դպրոցի տնօրենների նուսուցիչների հետ:

Պետք է կարողանա ռեսուրսներ գտնել և թարմացնել եղած գրականությունը:

Գրադարանավարը պետք է խթանի ընթերցանությունը համայնքում:

Գրադարանավարը պետք է լինի հոգեբան:

Եվ կարևոր է գրադարանավարի խոսքը,նա պետք է կարողանա խոսել ճիշտ և գեղեցիկ: